ԿԱՐԵՆ ՎԻԼՀԵԼՄԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ծնվել է 1963թ. օգոստոսի 14-ին:
1970-1980թթ. սովորել և ավարտել է Երևանի Լ. Տոլստոյի անվան միջնակարգ դպրոցը:
1980-1985թթ. սովորել և գերազանցության դիպլոմով ավարտել է Երևանի պետական համալսարանի կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետը:
1985-1996թթ. աշխատել է ՀՀ պետպլանի հաշվողական կենտրոնում, գիտության և մշակույթի գործիչների ասոցիացիայում:
Միաժամանակ դասավանդել է ԵՊՀ-ում:
1996-1998թթ. աշխատել է <<Հայէներգո>> ՊՁ-ում որպես գլխավոր տնօրենի տեղակալ:
1998-2001թթ. աշխատել է <<Հայէներգո>> ՓԲԸ-ում որպես գլխավոր տնօրեն:
2001թ. նշանակվել է ՀՀ էներգետիկայի նախարարի տեղակալ:
2001-2010 թթ. եղել է <<ՀայՌուսգազարդ>> ՓԲԸ-ի վարչության նախագահ-գլխավոր տնօրենը:
2009թ. ՀՀԿ համամասնական ցուցակով ընտրվել է Երևան քաղաքի ավագանու անդամ:
2010թ. դեկտեմբերի 17-ին Երևան քաղաքի ավագանու կողմից ընտրվել է Երևանի քաղաքապետ:
1989թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան:
2006թ. ՀՀ նախագահի հրամանագրով պարգևատրվել է <<Անանիա Շիրակացի>> մեդալով:
2008թ. ընտրվել է <<Առէկսիմբանկ>> ՓԲԸ խորհրդի նախագահ:
2008թ. ԼՂՀ նախագահի հրամանագրով պարգևատրվել է <<Անանիա Շիրակացի>> մեդալով:
2010թ. ստացել է տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան, ունի 32 գիտական աշխատանք:
Ամուսնացած է, ունի երեք երեխա:
Պաշտոնավարել է մինչև 2011թ. հոկտեմբերի 28-ը: